ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՐՄՆԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ

Ն-07

Գրանցված է Համապատասխանության
գնահատման նշանակված մարմինների
գրանցամատյանում
14 նոյեմբեր 2014թ.

Ն-07(Հ-07)2014
N _____

Ուժի մեջ է մինչև 14 նոյեմբեր 2017թ.

Սույն վկայականը հավաստում է, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Ս. Խ. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի «Համապատասխանության գնահատման մարմինների նշանակման ընթացակարգը և չափանիշները հաստատելու մասին» N 623-Ն որոշմամբ համապատասխանության գնահատման մարմնի նշանակման համար սահմանված չափանիշներին և նշանակվել է որպես արտադրանքի սերտիֆիկացման մարմին (Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2014 թվականի նոյեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Ս. Խ. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությանը արտադրանքի սերտիֆիկացում իրականացնող համապատասխանության գնահատման մարմին նշանակելու մասին» թիվ 1046-Ա հրաման):

ՀՀ. ք. Երևան 0051, Կոմիտաս պող. 49/2

Էլ. հասցե: 0237174@mail.ru

(իրավաբանական անձի գտնվելու վայր, էլ. հասցե, հեռախոս, ֆաքս)
Հեռ.: (37410) 23-71-74; Ֆաքս: (37410) 23 45 37

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Ս. Խ. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության արտադրանքի սերտիֆիկացման մարմնի նշանակման ոլորտը ներառում է արտադրանքի այն տեսակները, որոնց վրա տարածվում են ստորև ներկայացված Հայաստանի Հանրապետության տեխնիկական կանոնակարգերը՝

1. ՀՀ կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 21-ի «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացնող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1925-Ն որոշում
2. ՀՀ կառավարության 2006 թվականի հոկտեմբերի 19-ի «Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1560-Ն որոշում
3. ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 29-ի «Ձվի և ձվամթերքի տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1438-Ն որոշում
4. ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի «Հայկական կոնյակների և հայկական կոնյակի սպիրտների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 954-Ն որոշում
5. ՀՀ կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի «Հյութերին և հյութամթերքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 13-ի N 1602-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 744-Ն որոշում
6. ՀՀ կառավարության 2009 թվականի ապրիլի 30-ի «Շշալցված հանքային ջրերին ներկայացվող պահանջների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 491-Ն որոշում
7. ՀՀ կառավարության 2007 թվականի հունվարի 11-ի «Գարեջրի և դրա արտադրության վերաբերյալ տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 44-Ն որոշում
8. ՀՀ կառավարության 2007 թվականի հունվարի 11-ի «Հացահատիկին, դրա արտադրմանը, պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 22-Ն որոշում
9. ՀՀ կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի «Սննդային հավելումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 993-Ն որոշում
10. ՀՀ կառավարության 2006 թվականի հոկտեմբերի 19-ի «Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 1546-Ն որոշում
11. ՀՀ կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 16-ի «Մակերևութաակտիվ միջոցների և մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող ու մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 1795-Ն որոշում
12. ՀՀ կառավարության 2005 թվականի մայիսի 25-ի «Սննդամթերքի հետ շփվող պոլիմերային և այդ հիմքով պլաստմասսայե արտադրանքների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 679-Ն որոշում
13. ՀՀ կառավարության 2004 թվականի նոյեմբերի 11-ի «Խաղալիքների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 1551-Ն որոշում

ՀՀ էկոնոմիկայի նախարար՝ _____
(ստորագրությունը)

Կ.Տ.